ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնք
գ. Կարմիր Աղեկ, փողոց 2, տուն 19, հեռ. 091929305
Էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am
,, 18,, մայիսի 2016թ. թիվ 18/05-1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ուղարկում Կարմիր Աղեկ համայնքի ավագանու 2016թ. մայիսի 16-ի թիվ 6 և 7 որոշումներն առդիր երկու էջով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Կարմիր

ք. Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» մայիսի 2016 թվականի N 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Կարմիր Աղեկ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի "Սոցիալական հատուկ արտոնություններ" 10.7.1 գործառական դասակարգման "Այլ նպաստներ բյուջեի" 4729 հոդվածից Մայա Գագիկի Վարդանյանին հատկացնել սոցիալական օգնություն՝ 20000 /քսան հազար/ դրամի չափով, իսկ 09.4.1 գործառական դասակարգման "Բարձրագույն մասնագիտական կրթություն" "Այլ նպաստներ բյուջեի" 4729 հոդվածից համայնքի բնակիչ Արփինե Սամվելի Մարգարյանին ուսման վարձի համար հատկացնել դրամական օգնություն 50 000 /հիսուն հազար/ դրամի չափով, ընդամենը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

„16" մայիսի 2016թ
գ. Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» մայիսի 2016 թվականի N 7-Ա

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,

ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման, **ավագանին որոշում է՝**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Կարմիր Աղեկ համայնք:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

„16„ մայիսի 2016թ.
գ. Կարմիր Աղեկ